ՔԱՂՎԱԾՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք գյուղական համայնքի 2013 թվականի հունվարի 18-ին կայացած համայնքի ժողովի «Խորոնք գյուղական համայնքի ղեկավարի 2012 թվականի ընթացքում կատարած աշխատանքների հաշվետվության մասին» արձանագրությունից.

Համայնքի ժողովին մասնակցում էին 75 բնակիչներ և Արմավիրի մարզպետի տեղակալ Դ.Սամսոնյանը:

Արմավիրի մարզի Խորոնքի գյուղապետարանը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և ելնելով Հայաստանի Հանրապետության Կառավարության և Արմավիրի մարզպետարանի որոշումների պահանջներից, կատարել է ներքոհիշյալ աշխատանքները.

- **Գյուղատնտեսության բնագավառ.**

Գյուղապետարանը աջակցել է գյուղացիական տնտեսություններին գյուղատնտեսական աշխատանքներում: Խրախուսել է խաղողի, պտղի, բանջարաբոստանային կուլտուրաների մշակության զարգացմանը: 2011թվականին բանջարաբոստանային կուլտուրաների վաճառքի էժան գների պատճառով ընթացիկ տարում շուրջ 32 հա-ով ավելացել է հացահատիկի,11 հա կարտոֆիլի ցանքատարածքները բանջարաբոստանային կուլտուրաների ցանքատարածքների հաշվին:

Գարնան գյուղտնտեսական աշխատանքները լավ կազմակերպելու նպատակով բարելավվել և հարթեցվել են դաշտամիջյան «Կաթնաղբյուր», «Ադաներ», «Աղվես բներ» ճանապարհները,որի համար տրամադրվել է 150000 դրամ գումար:

Հողի սեփականատերերին հատկացվել է 68 տոննա պարարտանյութ,20 տոննա դիզելային վառելանյութ:

ՋՕԸ-ի ուժերով վերանորոգվել է Վ.Վարդանյան, Ա.Մանուկյան, Արարատյան, Պ.Սևակ փողոցների ոռոգման համակարգի խողովակները: Մեծ ուշադրություն է դարձվել ոռոգման համակարգի ջրատարների մաքրման աշխատանքներին համագործակցելով ՋՕԸ-ի աշխատակիցների հետ:

2012թ. համայնքի բնակիչների կողմից արտադրվել և հանրապետության շուկաներ,գործարաններ է արտահանվել շուրջ 12080

տոննա բանջարեղեն,520 տոննա ձմերուկ, 840 տոննա կարտոֆիլ,294 տոննա հացահատիկ,94 տոննա խաղող :
2012թ. կատրվել է 8 հա աշնանացան վարունգի ցանքս և արտադրվել է 340 տոննա վարունգ:
Համայնքում կատարվել է 107 հա հացահատիկի ցանքս:
Հացահատիկի միջին բերքատվությունը 1հա-ի հաշվարկով կազմում է 2.8 տոննա:

- **Հողաշինության և հողօգտագործման բնագավառ.**

Ի-ին կիսամյակի ընթացքում համայնքային սեփականություն հանդիսացող մնացած շուրջ 3 հա հողեր՝ վարձակալության են տրվել համայնքում հողազուրկ ընտանիքներին:Կազմվել է ընթացիկ տարվա հողային հաշվեկշիռը և հանձնվել մարզպետարան:

- **Քաղաքաշինության բնագավառ.**

Աջակցություն և վերահսկողություն է իրականացվել գյուղում բնակարանաշինությանը: 2012 թվականին 2 բնակիչների տրվել է շինարարական թույլտվություն:
Կառուցվել է գերեղմանատան մյուս մասի ջրագիծը,որի համար տրամադրվել է 280000 դրամ գումար:
Մեծ ուշադրություն է դարձվում գյուղի հուշարձանի պահպանության գործին:Ներկվել են նստարանները:Կանաչապատման և ոռոգման համար անխափան ջուր ապահովելու նպատակով տեղադրվել է նոր նասոս,գնվել են ռետինե խողովակներ,որոնց համար հատկացվել է 60000 դրամ գումար:
Վերանորոգվել է մայրուղու երկարությամբ ձգվող փողոցային լուսավորությունը,որի համար ծախսվել է 80000 դրամ գումար:

- **Տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառ.**

Գործում է միջհամայնքային տրանսպորտը՝ գրաֆիկով:
Կատարվել են 500000 դրամի՝ միջհամայնքային մայրուղու ասֆալտապատման, 500000 դրամի՝ համայնքի փողոցների և 100000դրամ գումար ՝ գերեզմանատան ճանապարհների խճապատման աշխատանքներ :
Մեծ ուշադրություն է դարձվում գերեզմանատանը հողհատկացման աշխատանքներին, այն կատարվում է՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի հանձնարարականի:

- **Աղբահանության բնագավառ.**

Աղբահանության աշխատանքները գյուղում կատարվում են մշտապես և անխափան, այդ աշխատանքները կատարելու համար հատկացվել է 1000000 դրամ գումար: Աղբը տեղափոխվում է շաբաթը 1 օր՝ այդ նպատակի համար նախատեսված հատուկ հողափոսի մեջ:

- **Մշակույթ և սպորտի բնագավառ.**

Կազմակերպվել է մշակութային ու սպորտային միջոցառումներ՝ Մայրության և գեղեցկության, Հաղթանակի, Սարդարապատի օրվա կապակցությամբ:Ապրիլի 7-ի՝«Մայրության և գեղեցկության» տոնի կապակցությամբ 170000 դրամի արժողության նվերներ են գնվել և հանձնվել գյուղապետարանի, «Կրթություն և մշակույթ» տնօրենության, Խորոնքի մանկապարտեզի աշխատակցուհիներին:
Մայիսի 9-ի՝«Հաղթանակի օրվա»տոնի կապակցությամբ գումարներ են հատկացվել պատերազմի վետերաններին,զոհվածների այրիներին, նրանց պատվին կազմակերպվել է ճաշկերույթ,որին մասնակցել են նաև համայնքի բնակիչներ:Այդ առիթով հատկացվել է 150000 դրամ գումար:
Սարդարապատի ճակատամարտի հաղթանակի օրվա կապակցությամբ կազմակերպված միջոցառման մասնակցության համար տրամադրվել է 110000 դրամ գումար:
Գործում է ըմբշամարտի խմբակը: Գյուղապետարանը հատուկ ուշադրություն է դարձնում միջնակարգ դպրոցի և մանկապարտեզի գործունեությանը՝ միաժամանակ ցուցաբերելով իր աջակցությունը բոլոր հարցերում:
Վերջին զանգի կապակցությամբ հատկացվել է 150000 դրամ գումար և այդ գումարով շրջանավարտների համար գնվել են նվերներ:Մանկապարտեզի սաների համար տարեվերջյան հանդեսի կապակցությամբ հատկացվել է 190000 դրամ գումար և գնվել են նվերներ 67 երեխաների համար:
Նոր տարվա կապակցությամբ 800000 դրամ գումար է հատկացվել և համայնքի 1-10 տարեկան 380 երեխաների համար ամանորյա նվերների տոպրակներ են հանձնվել:

- **Սոցիալական բնագավառ.**

Ընթացիկ ժամանակաշրջանում գյուղապետարանը զգալի աշխատանքներ է կատարել այդ ոլորտում: Գյուղապետարանի մշտական հոգածության և ուշադրության կենտրոնում են եղել Հայրենական մեծ պատերազմի վետերանները, Արցախյան

հերոսամարտի զինծառայողները, նպաստառուները, այրիները, թոշակառուները: Անաչառ և անկողմնակալ վերաբերմունք է ցուցաբերվել նպաստառու ընտանիքների հանդեպ, ապահովվել է սոցիալական արդարության սկզբունքը:
2012 թվականի ընթացքում 3000000 դրամ ֆինանսական օգնություն է ցուցաբերվել,արդ թվում՝ հիվանդ և սոցիալապես անապահով 71 և նորածին երեխաներ ունեցող 25 ընտանիքների:

- **Ֆինանսներ**

Հետևողական աշխատանք է տարվել հարկերի հավաքագրումների ուղղությամբ,որպեսզի կատարվեն բյուջեով նախատեսված բոլոր ուղղություններով հավաքագրումների պլանները:

2012թ.

N	Հարկի տեսակը	2012թ. պլան հազ.դրամ	1-ին կիսամյակ	%	2-րդ կիսամյակ	%	ընդամենը
1.	հողի հարկ	8065.3	729.3	8.5	7332.7	91.5	100%
2.	գույքահարկ	3138.5	489.7	15.6	2167.8	69.1	84.7
3.	շենքի վարձակալ.վարձ	150.0	--------	------	------	----	------
4.	վարձակալ. հողի վարձ	600.0	64.9	10.8	962.6	160.5	171.3
5.	տեղական տուրքեր	280.0	-------	-----	83.7	83.7	83.7

2012թ.

N	Ծախսեր	2012թ.պլան հազ.դրամ	1-ին կիսամյակ	2-րդ կիսամյակ	%
1.	ճանապարհների շինարարություն	3000.0	1000.0	850.0	61.7
2.	աղբահանում	1000.0	499.8	499.8	100
3.	ջրամատակարարում	1000.0	------	280.0	28
4.	սոց. օգնություն	3000.0	1390.0	1610.0	100
5.	երիտասարդական միջոցառումներ	600.0	170.0	------	28.3

2012թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Խորոնք գյուղական համայքը հավաքագրումների տարեկան պլանը կատարել է 105% - ով:

- **Առաջնային պրոբլեմներ**

Խմելու ջրի մատակարարումը,միջնակարգ դպրոցի սպորտդահլիճի կառուցումը,մանկապարտեզի,երաժշտական դպրոցի վերանորոգումը և մշակույթի տան տանիքի վերանորոգումը:

Ժողովի նախագահ՝ / Ս.Նահապետյան/

Քարտուղար ՝ / Ս.Կարապետյան/